

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄ

_____ թվականի _____

ԱԽՈՒՐՅԱՆԻ ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ 2016-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 17-րդ հովածը՝
Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

1) Ախուրյանի ջրավազանային տարածքի 2017-2022 թվականների կառավարման
պլանը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Ախուրյանի ջրավազանային տարածքի արդյունավետ կառավարմանն ուղղված
առաջնահերթ միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող
օրվանից:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

ԱԽՈՒՐՅԱՆԻ ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ 2017-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

I. ԱԽՈՒՐՅԱՆԻ ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Ախուրյանի ջրավազանային կառավարման պլանի նախագծի հիմնական նպատակը Ախուրյանի ջրավազանային տարածքում բոլոր ջրային մարմինների համար լավ էկոլոգիական կարգավիճակին հասնելն է, ինչպես նաև ջրօգտագործողների, ներառյալ՝ համայնքների, էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի փոխկապակցված հարաբերությունները հավասարակշռելը: Այն նպատակ ունի նաև աջակցելու ջրային ռեսուրսների կառավարման համար պատասխանատու մարմիններին, ներառյալ՝ Ախուրյանի ջրավազանային տարածքային կառավարման բաժնին, վարչական մարմիններին, քաղաքականությամբ զբաղվողներին և հանրությանը՝ ջրային ռեսուրսների ոլորտում որոշումների կայացմանը:

2. Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմուտքում, սահմանակից է Վրաստանին և Թուրքիային, իսկ վերջինիս հետ ունի նաև անդրսահմանային բնույթ: Տարածքը ներառում է Ախուրյանի և Մեծամորի գետավազանները և զբաղեցնում է 5029 կմ² մակերես ՀՀ տարածքում: Զրավազանային տարածքը ներառում է 6 քաղաքային և 253 գյուղական բնակավայր, որից 127-ը՝ Շիրակի, 57-ը՝ Արագածոտնի, 74-ը՝ Արմավիրի և 1-ը՝ Արարատի մարզում:

II. ԱԽՈՒՐՅԱՆԻ ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

3. Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսները ընդամենը կազմում են 4609,3 մլն մ³, այդ թվում՝ բազմամյա բնական գետային հոսքը՝ 2593,4 մլն մ³, ստորերկրյա ջրային պաշարները՝ 1998,7 մլն մ³, բնական լճերը՝ 0,1068 մլն մ³, ջրամբարների մեռյալ ծավալը՝ 16,11 մլն մ³, ձնաբծերը՝ 1,05 մլն մ³: Բազմամյա բնական գետային հոսքը ներառում է նաև Մեծամորի գետավազանում Արաքս գետից վերցվող Հայաստանի հասանելի ջրի քանակը՝ 1114,9 մլն մ³, ինչպես նաև էկոլոգիական թողքը՝ 300,5 մլն մ³, որից Ախուրյանի գետավազանի գետերի էկոլոգիական թողքը՝ 194,5 մլն մ³ և Մեծամորի գետավազանի գետերի էկոլոգիական թողքը՝ 106 մլն մ³:

4. Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի ստորերկրյա ջրերի պաշարները կազմում են 1998,7 մլն մ³/տարի, այդ թվում՝ խորքային հոսքը 601,3 մլն մ³/տարի և A+B և C₁ կարգի ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները համապատասխանաբար 843,7 մլն մ³/տարի և 553,7 մլն մ³/տարի:

5. Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական և ազգային ջրային պաշարները որոշվում են “Ջրի ազգային ծրագրի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն, և բոլոր արժեքները նշված են բազմամյա միջին տարեկան կտրվածքով:

6. Ախտորյանի ջրավազանային կառավարման տարածքի օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական և ազգային ջրային պաշարները սահմանված են սույն հավելվածի N 1 աղյուսակում:

Աղյուսակ N 1

Ջրային ռեսուրսները, մլն մ ³	Գետավազան		Ախտորյանի ՋԿՏ
	Ախտորյան	Մեծամոր	
Օգտագործելի ջրային ռեսուրսները			
Գետային հոսքը	506,2	1786,7 ¹	2292,9
A+B կարգով հաստատված ստորերկրյա ջրերի շահագործական պաշարներ՝ աղբյուրների միջին տարեկան հոսք	102,9	740,8	843,7
Ընդամենը			3136,6
Ռազմավարական ջրային պաշար			
Բնական լճերի ծավալի 1/3 մասը	0,0046	0,031	0,0356
Ջրամբարների մեռյալ ծավալի 2/3 մասը	9,79	0,47	10,26
C _i կարգով հաստատված ստորերկրյա ջրերի շահագործական պաշարներ	35,1	518,6	553,7
Ընդամենը			564,0
Ազգային ջրային պաշար			
Գետերի էկոլոգիական հոսքը	194,5	106	300,5
Բնական լճերի ծավալի 2/3 մասը	0,0092	0,062	0,0712
Ջրամբարների մեռյալ ծավալի 1/3 մասը	4,82	0,23	5,05
Ձնաբծեր և ֆիոնների դաշտեր	1,03	0,02	1,05
Ստորերկրյա ջրերի խորքային հոսք	56,1	545,1644	601,3
Ընդամենը			907,9

III. ԱԽՈՒՐՅԱՆԻ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՑԵՆԱՐՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

7. Ախտորյանի ջրավազանային կառավարման տարածքում ջրային ռեսուրսների բարելավումն ըստ ոլորտների տալու նպատակով կանխատեսվում է գետավազաններում ջրառաջարկն ու տնտեսական զարգացմամբ պայմանավորված ջրապահանջարկը՝ կառավարման պլանավորման առաջին վեցամյա ժամանակահատվածի համար: Կանխատեսվող ջրառաջարկը գնահատվում է՝ հաշվի առնելով գետավազաններում տնտեսական զարգացման միտումները և կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա, ինչպես նաև գնահատվում է՝ հաշվի առնելով Ախտորյանի ջրավազանային կառավարման տարածքի գետավազանների ազգային, ռազմավարական և օգտագործելի ջրային ռեսուրսների մեծությունները, որոնք սահմանված են N 1 աղյուսակում: Տնտեսական զարգացման վրա հիմնված ջրապահանջարկի կանխատեսումներ անելիս կիրառվում են տարբեր մոտեցումներ ջրօգտագործման տարբեր ոլորտների համար՝ պայմանավորված ոլորտների տնտեսական զարգացման առանձնահատկություններով:

8. Ջրօգտագործման կանխատեսումը կատարվում է ելակետային սցենարով, որով ոլորտների աճի տեմպերի կանխատեսումները հիմնականում հիմնված են ոլորտային զարգացման ծրագրերով սահմանված նպատակային ցուցանիշների վրա:

¹⁾ Որից 1114.9 մլն մ³ Արաքս գետից:

9. Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում ջրառաջարկի կանխատեսվող փոփոխությունը 2017-2022 թվականների համար սահմանվում է N 2 աղյուսակում:

Աղյուսակ N 2

Գետավազան	Ջրառաջարկի տիպը	Ջրառաջարկը, մլն մ ³						
		2016 թ.	2017 թ.	2018 թ.	2019 թ.	2020 թ.	2021 թ.	2022 թ.
Ախուրյան	մակերևութային	506,2	503,2	500,2	497,7	494,1	491,2	488,1
	ստորերկրյա	102,9	102,4	101,6	101,0	100,4	99,7	99,0
Մեծամոր	մակերևութային	1786,7	1775,8	1765,0	1765,0	1741,2	1730,5	1718,9
	ստորերկրյա	740,8	736,1	731,4	726,7	722,0	717,5	712,7
Ախուրյանի ԶԿՏ	մակերևութային	2292,9	2279,0	2265,1	2262,7	2235,3	2221,7	2207,0
	ստորերկրյա	843,7	838,5	833,1	827,7	822,3	817,2	811,7
Ընդամենը Ախուրյանի ԶԿՏ-ում		3136,6	3117,5	3098,2	3090,4	3057,6	3038,9	3018,7

10. Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում կանխատեսված ջրառաջարկի և ջրապահանջարկի համադրությամբ գնահատվում է ջրավազանում ջրային ռեսուրսների դեֆիցիտը կամ պրոֆիցիտը՝ 2016 թվականից մինչև 2022 թվականը: Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի ջրառաջարկի և ջրապահանջարկի վերլուծությունը տրվում է ելակետային սցենարով՝ ըստ ջրօգտագործման ոլորտների: Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում ջրառաջարկի և ջրապահանջարկի միտումները մինչև 2022 թվականը, ըստ ջրօգտագործման ոլորտների, սահմանվում են N 3 աղյուսակում:

Աղյուսակ N 3

Գետավազան	Ջրօգտագործումն ըստ ոլորտների	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
Ախուրյան	Խմելու-կենցաղային	54,1	53,56	53,03	52,49	51,96	51,42	50,89
	Ոռոգում	429,8	438,69	447,58	456,47	465,37	474,26	483,15
	Արդյունաբերություն	0,29	0,3	0,31	0,32	0,33	0,34	0,35
	Ձկնաբուծություն	15,3	16,39	17,49	18,58	19,67	20,76	21,86
	Էներգետիկա ²	220,7	218,05	215,4	212,75	210,1	207,44	204,79
	Ընդամենը ջրապահանջարկը	720,2	727,0	733,8	740,6	747,4	754,2	761,0
	Ջրառաջարկը	609,1	605,6	601,8	598,7	594,5	590,9	587,1
	Դեֆիցիտ/պրոֆիցիտ	-111,1	-121,4	-132,0	-141,9	-152,9	-163,4	-174,0
Մեծամոր	Խմելու-կենցաղային	28,6	28,3	28,0	27,7	27,4	27,1	26,8
	Ոռոգում	115,1	118,93	122,76	126,59	130,41	134,24	138,07
	Արդյունաբերություն	32,8	34,3	35,8	37,3	38,8	40,3	41,8
	Ձկնաբուծություն	48,5	51,9	55,4	58,9	62,5	66,0	69,5
	Էներգետիկա	69,6	70,04	70,49	70,93	71,37	71,81	72,26
	Ընդամենը ջրապահանջարկը	294,6	303,5	312,4	321,4	330,5	339,4	348,4
	Ջրառաջարկը	2527,5	2512,0	2496,4	2491,7	2463,1	2448,0	2431,6
	Դեֆիցիտ/պրոֆիցիտ	2232,9	2208,5	2184,0	2170,3	2132,7	2108,6	2083,2

²) Ախուրյանի գետավազանի էներգետիկ նպատակով ջրապահանջարկը հաշվարկելիս ներառվել է միայն գետավազանի ստորին հատվածում գտնվող Մարմարաշեն ՀԷԿ-ի ջրապահանջարկը, քանի որ գետավազանի վերին հատվածներում հիդրոէներգետիկ նպատակներով օգտագործվող ջուրը վերադարձնելուց հետո օգտագործվում է նաև այլ ոլորտներում և համապատասխանաբար հաշվի է առնված ըստ այդ ոլորտների ջրապահանջարկում:

Գետա- վազան	Ջրօգտագործումն ըստ ուղղությունների	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
Ախուրյանի ՋԿԿ	Խմելու-կենցաղային	82,7	81,9	81,0	80,2	79,3	78,5	77,6
	Ոռոգում	544,9	557,6	570,3	583,1	595,8	608,5	621,2
	Արդյունաբերություն	33,1	34,6	36,1	37,6	39,1	40,6	42,2
	Ձկնաբուծություն	63,8	68,3	72,9	77,5	82,2	86,8	91,4
	Էներգետիկա	290,3	288,1	285,9	283,7	281,5	279,3	277,1
	Ընդամենը ջրապահանջարկը	1014,8	1030,5	1046,2	1062,0	1077,9	1093,6	1109,4
	Ջրառաջարկը	3136,6	3117,5	3098,2	3090,4	3057,6	3038,9	3018,7
	Դեֆիցիտ/պրոֆիցիտ	2121,8	2087,1	2052,0	2028,4	1979,7	1945,3	1909,2

11. Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները (2017-2018 թթ.) սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի _____-ի _____ որոշման N 2 հավելվածով:

**ԱԽՈՒՐՅԱՆԻ ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆՆ
 ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
1.	Ախուրյանի ՋԿՏ-ում տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների պայմանների վերանայում և իրավակիրարկման բարելավում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2017 թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ
2.	Ախուրյանի ՋԿՏ-ի ռիսկային ջրային մարմիններում ՓՀԷԿ-երի ջրօգտագործման թույլտվություններով սահմանված ջրօգտագործման պայմանների վերանայում՝ ապահովելու էկոլոգիական թողքը պահպանումը	ՀՀ բնապահպանության նախարարություն	2017 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ
3.	Ախուրյանի ՋԿՏ-ում Զրի շրջանակային դիրեկտիվի սկզբունքներին համահունչ մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիտորինգի նոր, համապարփակ համակարգի մշակում	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	2018 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ
4.	Ախուրյանի ՋԿՏ-ում մակերևութային ջրային ռեսուրսների էկոլոգիական և քիմիական կարգավիճակի, ինչպես նաև ստորերկրյա ջրային ռեսուրսների քանակական և քիմիական կարգավիճակի գնահատման նոր համակարգերի մշակում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2018 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ
5.	Ախուրյանի ՋԿՏ-ում փաստացի ջրօգտագործման կենտրոնացված, առցանց վերահսկման համակարգի փուլային ներդրման ծրագրի մշակում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2018 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ

Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի ընդհանուր բնութագիրը, ճնշումների և ազդեցությունների վերլուծությունը, կառավարման պլանի իրականացման մեխանիզմները և նախնական ֆինանսական գնահատականները տրված են “Ախուրյանի ջրավազանային տարածքի կառավարման պլանի 2017-2022 թթ. միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման մեջ: